ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության 2016 թվականի կատարված աշխատանքների մասին

Մարզում գյուղատնտեսության զարգացման նպատակով 2016 թվականին պետական աջակցության ծրագրերով շուկայականից ցածր գներով մարզի հողօգտագործողներին հատկացվել է 459.85տ /55 182 000դրամ/ ազոտական, 5.75տ /805 000դրամ/ կալիումական, 4.0տ /560 000 դրամ/ ֆոսֆորակաո պարարտանյութեր , 64150լ /17 962 000 դրամ/ դիզելային վառելանյութ, 81տ /10 530 000դրամ/գարնանացան գարու, 0.5տ /750 000դրամ/ առվույտի և 104տ աշնանացան ցորենի սերմացուներ:

2017 գյուղատնտեսական աշխատանքների համար պարարտանյութերի անհրաժեշտ քանակության մասին ներկայացվել է գյուղատնտեսության նախարարություն.

- Ազոտական պարարտանյութ 541.5տ /+81.65/
- Կալիումական պարարտանյութ 6.95տ /+1.15/
- Ֆոսֆորակաի պարարտանյութ 7.76տ /+3.76/

Ձմռան և վաղ գարնանային ցրտահարությունների պատճառով վնասվել են մարզի խաղողի ու պտղատու այգիները: Գործող 6 հակակարկտային կայանները բավարար չեն կարկտահարության դեմ պայքարի համար, կարկտահարության վնասները մեղմելու նպատակով անհրաժեշտ են ևս 20 կայաններ:

2016 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ ACBA-CREDIT AGRIKOLE բանկի միջոցով մարզի 814 գյուղացիական տնտեսություններին տրվել է շուրջ 651 600 000 դրամ սուբսիդավորված վարկեր 14% տոկոսադրույքով, որից 6%-ը սուբսիդավորվել է պետության կողմից, 154 տնտեսությունների տրվել է 126 640 000 դրամ գյուղացիական վարկ 13.5-20% տոկոսադրույքով և 142 գյուղացիական տնտեսությունների տրվել է 315 170 դոլար վարկ 14-24% տոկոսադրույքով: 2016 հունվարի 1-ի դրությամբ մարզում առկա է 25026 գլուխ խոշոր եղջերավոր անասուն/+2448/, որից կովեր՝ 9861 /+218/ գլուխ, մանր եղջերավոր՝ 21691 (-3133), խոզեր՝ 2627 գլուխ (+578), թռչուններ՝ 116557 թև (-22882) և մեղվաընտանիք՝ 22570/+715/ փեթակ:

Ոռոգման տեզոնի ընթացքում ջուրօգտագործողներին է տրվել 9161 հազ. խմ ոռոգման ջուր , որի հասույթը կազմել է 100 775 000 դրամ, գանձվել է 108 950 000 դրամ, որը կազմում է հասույթի 108 %- ը:

2016թ.մարզի ընդհանուր ցանքային տարածությունը կազմել է 6851 հա, որը նախորդ տարվա համեմատ ավել է 1138 հա-ով, /աղյուսակ 1/

N	ԱՆՎԱՆՈՒՄԸ	Տարածությունը / հա			Համախառն բերքը / տ /		
		2015թ	2016թ	Տարբ.	2015թ	2016թ	տարբ
1	Հացահատիկև հատիկաընեղեն	3258	3984	726	6665	12192	5527
2	Բանջարեղեն	495	661	166	9403	13580	4177
3	Բոստան	38	50	12	816	982	166
4	Կարտոֆիլ	200	289	89	3739	6225	2486
5	Պտուղ, հատապտուղ	1966	1684.6	-281	8440	4976	-3464
6	Խաղող	816.3	862.8	46.5	5708	1978	-3730
7	Խոտ				30671	34783	4112
8	Ընդ.ցանքատարածություն	5713	6851	1138			
9	Կաթ տ.				25500		
10	Միս տ.				6300		
11	Ձու մլն. հատ				20.9		
	Համախառն արտադրանքը մլրդ. դրամ				21.4		

Եղեգնաձորի պահածոների գործարանի արտադրական հզորությունները թույլ են տալիս տարեկան մթերել շուրջ 1600տ. պտուղ-բանջարեղեն, որը կարող է լրացուցիչ խթան հանդիսանալ գյուղացիական տնտեսությունների կողմից արտադրված պտղի և բանջարեղենի իրացումը արդյունավետ և ժամանակին կազմակերպելու ուղղությամբ:

Վերջինիս կողմից մթերվել է 38 տոննա պտուղ, 582 տոննա բանջարեղեն:

Արտադրված 1978 տոննա խաղողից, վերամշակող ձեռնարկությունների կողմից մթերվել է 1604 տոննա /միջին գինը 217.6 դրամ/: <<Սպայկա>> ընկերության կողմից մթերվել է 30տ դեղձ /250դրամ/ և 40 տոննա խաղող/180 դրամ/:

Հինգ կաթ մթերող և վերամշակող ընկերությունների կողմից մթերվել է 1220տ կաթ և արտադրվել է 172 տոննա պանիր /վաճառվել է 2150 դրամ միջին գնով/:

Գործող հինգ չրանոցներում 2016 թվականի ընթացքում արտադրվել է 68 տոննա չիր /վաճառվել է 3600 դրամ միջին գնով/:

12 համայնքներում գործում են 15 սառնարանային տնտեսություններ՝ 639տ ընդհանուր տարողությամբ:

14 համայնքներում առկա են 44 ջերմոցներ, 2,2 հա ընդհանուր տարացքով,որոնցում 2016թ արտադրվել է 80տ բանջարեղեն:

147 ֆերմերային տնտեսություններից 118-ը զբաղվում է անասնապահությամբ /ընդ. 3176գ խոշոր եղջրավոր և 5346 գլուխ մանր եղջրավոր/, իսկ 28-ը՝ հողագործությամբ /ընդ. 1324հա/:

Առկա են 24 կոոպերատիվներ, որոնց անդամների ընդհանուր թիվը 1140 մարդ է : Կոոպերատիվներն ունեն հետևյալ ուղղվածությունը. չրի արտադրություն - 1, անասնապահություն-7, մրգի սառնարանային պահպանություն –7, բուսաբուծություն-2, կաթի մթերում և վերամշակում - 3, գյուղատնտեսական աշխատանքների մեքենայական սպասարկում -4:

Վարչության կողմից սահմանված ժամկետներում համակարգվել է պետական պատվերով նախատեսված անասնաբուժական ախտորոշիչ և կանխարգելիչ բոլոր միջոցառումները:

2016թ կատարվել է 273 035 գլուխ գյուղատնտեսական կենդանիների կանխարգելիչ և 39205 գլուխ կենդանիների ախտորոշիչ միջոցառումներ:

Անասնաբուժության ռազմավարական զարգացման շվեցարական գրասենյակի կողմից մարզի Բարձրունի, Մարտիրոս, Խնձորուտ,Հերհեր, Գնդեվազ, Կեչուտ, Զառիթափ, Ազատեկ,Գետափ, Արտաբույնք, Խաչիկ, Ռինդ, Ելփին, Շատին համայնքներում ստեղծվել են անասնաբուժական կետեր, ամեն կետի համար գնվել է մեկ միլիոն դրամի դեղորայք և գործիքներ, և 300 000 դրամի գույք: Ընթացքի մեջ է Ելփին, Վայք,Գնդեվազ և Գլաձոր համայնքներում արհեստական սերմնավորման կետերի կազմավորումը: Գրասենյակի կողմից իրականացվում է նաև << **Համակարգչային ուսուցում համայնքներին** >> ծրագիրը Կեչուտ, Գնիշիկ, Աղնջաձոր և Վարդահովիտ համայնքներում: Գյուղապետարանների աշխատակիցներին ուսուցումն ավարտելուց հետո կտրամադրվեն համակարգիչներ:

Բույսերի պաշտպանության ծրագրով ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից անվճար մարզին հատկացվել է 42կգ ռոդիֆակում թունանյութ, որով 9 համայնքներում իրականացվել է մկնանման կրծողների դեմ պայքարի աշխատանքներ:

Մարզում «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի շրջանակներում ընդգրկվել են Աղնջաձոր, Ռինդ, Վերնաշեն, Զառիթափ Սարավան, Կարմրաշեն, Շատին, Արտաբույնք համայնքները, ծրագրի միջոցով Աղնջաձոր և Կարմրաշեն համայնքները ձեռք են բերել մեկական ՄՏԶ-82 տրակտոր,իրենց գյուղ գործիքներով /20% համայնքի միջոցներով/ :Ընդհանուր առմամբ կատարվել են 173.9 մլն դրամի շինարարական աշխատանքներ:

Մարզում առկա է 424 միավոր գյուղ տեխնիկա, որից սարքին ՝ 301-ը/71 վարի տրակտոր, 23 կոմբայն /: 2014-2016թթ ձեռք է բերվել 13 միավոր գյուղ տեխնիկա, 18 միավոր գյուղ. գործիքներ:

Բնապահպանություն

Հաշվետու ժամանակաշրջանում ուսումնասիրվել են մարզի տարածքում բնապահպանական խնդիրները և լուծման նպատակով համապատասխան մարմիններին ներկայացվել են առաջարկություններ:

Օրենքով սահմանված կարգով վերահսկողություն է իրականացվում Վայք և Եղեգնաձոր քաղաքների աղբավայրերի շահագործման ուղղությամբ, իսկ կանոնակարգված աղբաթափություն իրականացնելու նպատակով Եղեգնաձոր քաղաքի աղբավայրի մուտքը ցանկապատվել և տեղադրվել է դարպաս: Ընդունվել է աշխատակից, որի միջոցով իրականացվում է շուրջօրյա հերթապահություն, ինչպես նաև աղբանոցի մաքրված տարածքներում մարզպետարանի աշխատակիցների կողմից տնկված տնկիների անհրաժեշտ խնամքի աշխատանքները:

Ջերմուկ քաղաքում առկա է 150 աղբարկղ և 95 աղբաման, որից 25 աղբամանը տեղադրվել է հաշվետու տարում:

Եղեգնաձոր քաղաքում առկա է 85 աղբարկղ, 35 աղբաման, որից 25 աղբարկղը և 10 աղբամանը տեղադրվել է հաշվետու տարում: Վայք քաղաքում առկա է 50 աղբաման:

Այս պահին մարզի գյուղական համայնքներում չհսկվող և չարտոնագրված աղբակույտեր գործնականում գոյություն չունեն:

Մարզպետարանի կողմից աշխատանքներ են տարվում կենտրոնացված և միջհամայնքային աղբավայրերի տեղադրման ուղղությամբ:

Տարվա ընթացքում համակարգվել է մարզի տարածքում գործող *անտառտնտեսությունում տարվող աշխատաքները՝ անտառների էկոլոգիական և* սոցիալական նշանակության բարձրացման, անտառների վիճակի բարելավման, պահպանության, պաշտպանության, ընդլայնված վերարտադրության և արդյունավետ օգտագործման ուղղությամբ: Մշտական ուշադրության կենտրոնում է անտառների հակահրդեհային և կանխարգելիչ միջոցառումների ծրագրի իրականացման աշխատանքները: Մարզի տարածքում գործող անտառտնտեսության հաշվեկշռում գտնվող 13687.8 հա հողատարածքներից անտառածածկ է 10156.1 հա:

ՈՒսումնասիրությունների արդյունքում բացահայտված բացթողումները վերացնելու նպատակով առաջարկվել է ուժեղացնել տեսչական աշխատանքները ջրօգտագործող և ընդերք շահագործող տնտեսվարող սուբյեկտների գործունեությունը բնապահպանական օրենսդրությանը համապատասխանեցնելու ուղղությամբ:

Բնապահպանական պետական տեսչության Վայոց Ձորի տարածքային բաժնի, մարզային ոստիկանության, անտառտնտեսության և մարզպետարանի կողմից իրականացված տեսչական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է ապօրինի ծառահատման՝ 10 , ձկնագողության՝ 12 և որսագողության 2 դեպքեր:

Հաշվետու ժամանակաշրջանում ապօրինի ընդերք շահագործման և հողի բերրի շերտի օգտագործման կարգի խախտման դեպքեր չեն արձանագրվել:

Մարզի տարածքում գործում են.

- հանքային ջրերի 2 հանքավայր
- հանքային ջրերի շշալցման 3 գործարան
- քարի արդյունահանման 7 հանքավայր
- քարի վերամշակման 4 արտադրամաս:

Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ՝ Մ. Ներսիսյան